

հայեացքը, միամտաբար հաւատալով, որ նախ՝ Քրիստոսի փոխանորդը իր աւետարանական եւ մարդասիրական պարտականութիւնները կը կատարի հանդէպ մի բոլոր քրիստոնեայ հայութեան, որ կոտորուած, բնաջնջուած էր Արեւելքում, գլխաւորապէս իր կրօնի պատճառով: Երկրորդ՝ որ նրա կոչին հնազանդ, Արեւմուտքի վեհապետներն ու ժողովուրդները դունդադունդ կը դիմեն դէպի Արեւելք — հայ ժողովուրդին ազատագրելու համար:

Ահաւասիկ Ստեփաննոս Ե. Սարմատեցի կաթողիկոսը (1541-1547), որը մեր քաղաքական պատմութեան մէջ առաջին շեշտուած դէմքն է հանդիսանում եւ Հայաստանի անկախութեան զաղափարի առաջին ռահվիրան:

Մի «խմաստուն եւ դրասէր» մարդ էր նա, սնուած ու կրթուած Կ. Պոլսում եւ «հմուտ բազում գիտութեանց, գիտակ բարբառոյ այլեւայլ ազգաց, եւս եւ լատինականին»:

Չափազանց ծանր պայմաններում կաթողիկոս դարձաւ նա, նպատակ ունենալով «ծաղկեցուցանել բազում իրօք զաթոռն Էջմիածնի»: Բայց դժբախտաբար ոչինչ անել չկարողացաւ, «խոռվալից եւ դժնեայ աւուրց հանդիպեալ»:

Իր նախորդներից շատերի նման՝ նա էլ չկարողանալով միայնակ տանել կաթողիկոսութեան հետ կապուած դժուարութիւնները, իրեն աթոռակից ձեռնադրեց Միքայէլ Սեբաստացուն, «զայր հաւատարիմ եւ զգօն»: Աթոռը շուտով առժամապէս նրան թողեց ու ինքը հեռացաւ դէպի Պոլիս:

Սակայն իր դուռին ազատելու համար չէր, որ նա թողեց Էջմիածինը: Նա իր մտքում ունէր քաղաքական մէկ խոշոր ծրագիր — Հայաստանի ազատութիւնը: Նա գնում էր Պոլիս՝ որպէս պատգամաւոր պարսկական մասի հայութեան կողմից, այնտեղից էլ Եւրոպա անցնելու եւ պետական արքունիքներում Հայաստանի անկախութիւնը փնտռելու: Էջմիածնից կամ Հայաստանից այդ անել հնարաւոր չէր — նախ՝ պարսիկների ահից եւ ապա՝ անհամար հայ մատնիչների երկիւղից:

Հասկանալի է, որ Արեւմուտք դնալով, իր հայեացքն ամենից առաջ նա պիտի ուղղէր դէպի Հոռովմ, ուր նստում էր իր կարգակիցը, «քրիստոնէութեան ու բոլոր ճնշուածների

պաշտպանը», «Յիսուսի տեղապահը» եւ «Պողոս ու Պետրոս առաքեալների սրբազան յաջորդը»:

Եւ յիրաւի. վերցնելով իր հետ մէկ արքեպիսկոպոս, մէկ եպիսկոպոս եւ մի քանի այլ պաշտօնեաներ, Պոլսից մի կերպ նա անցնում է դէպի Հոռովմ — Չամչեանի ասածին պէս՝ «յուլիս սրբոյն Պետրոսի եւ Պողոսի եւ վասն ցուցանելոյ զհպտաակութիւն իւր առ սրբազան Պապն, զոր ունէր եւ զմիաձայնութիւն ի բանս հաւատոյ»:

Բայց իրօք նա գնում էր — ինչպէս յիշեցինք — միայն եւ միայն քաղաքական նպատակներով, որի համար, եթէ անհրաժեշտ լինէր, գուցէ նաեւ որոշ զիջումներ անէր կաթողիկ եկեղեցուն:

Եթէ կրօնական լինէր նրա ճանապարհորդութեան նպատակը, այդ դէպքում հայոց կաթողիկոսն այլեւս ի՞նչ գործ ունէր եւրոպական միւս արքունիքներում: Այն ինչ, նոյն Չամչեանի վկայութեամբ, ինչպէս երեւում է՝ Հրոռովմից յոյսը կտրած, նա ճանապարհուեց դէպի Գերմանիա, եղաւ Կարլոս Ե. կայսեր արքունիքում. ապա անցաւ Լեհաստան, Ռուսաստան եւ վերջ ի վերջոյ դատարկաձեռն վերադարձաւ Էջմիածինը):

Բացի դրանից մեր մատենագրութիւնը պահել է իր ծոցում մէկ թանկագին փաստաթուղթ, որը անհերքելիօրէն սպաւոցուցանում է, թէ Սարմատեցու ուղեւորութիւնը բացառապէս քաղաքական նպատակներ ունէր:

Դա այն աղերսագիրն է, որ հայոց կաթողիկոսը, Վենետիկով Հոռովմ անցնելիս, ներկայացրել է Վենետիկի հասարակապետութեան կառավարութեան — պարսկական Հայաստանի հայ երեւելիների կողմից:

Աղերսագրի մանաւանդ վերջին խօսքերն այլեւս որեւէ կասկած չեն թողնում այդ ճանապարհորդութեան քաղաքական բնոյթի մասին: «Եւ մեք խեղճ հայքս ի մասին պարսից — առուած է աղերսագրի մէջ — ի ներքոյ լսիստ տառապանաց այլադէնից, կու սպասեմք ձեր գալուն, ինչպէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի: Գիտեմք որ ի զգօնութենէ

1) Չամչեան, Հայ. պատմ. Գ. եր. 518: